ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 04.07.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/20

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 14.06.2017թ. թիվ 03/73-3/10728-17 գրությամբ «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) 08.06.2017թ. թիվ ԴՎԱ/1720 գրության հիման վրա, 14.06.2017թ. թիվ 03/73-3/10728-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. **«Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը**

«Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն 23.06.2017թ. գրությամբ Խորհրդին հայտնել է, որ մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/29» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.03.2017թ. թիվ 6 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն համապատասխան չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, իսկ նույն արձանագրության 4.2 կետով որոշում է կայացվել 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցներին ծանուցել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ:

«Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն հրավերով սահմանված ժամկետում էլեկտրոնային փոստով Պատվիրատուին է ուղարկել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընկերությունը վերը նշված գրությանը կից Խորհրդին է ներկայացրել Ընկերության՝ masisigarun@mail.ru, էլեկտրոնային փոստի հասցեից Պատվիրատուի՝ t.abrahamyan@mil.am, էլեկտրոնային փոստի հասցեին 04.04.2017թ. որակավորման փաստաթղթերը ուղարկելու փաստը հավաստող էլեկտրոնային փոստի արտատպումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 23.06.2017թ. ժամը 11:30-ի նիստի վերաբերյալ, Ընկերության լիազորված ներկայացուցիչը ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է 23.06.2017թ. գրությամբ Խորհրդին ներկայացված դիրքորոշումը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը 08.06.2017թ. թիվ ԴՎԱ/1720 գրությամբ ներկայացրել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/29» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով գնային առաջարկ են ներկայացրել թվով 7 մասնակից, այդ թվում նաև՝ «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, այնուհետև գնահատող հանձնաժողովի կողմից Ընթացակարգի թիվ 8, 10-15 և 18-րդ չափաբաժինների մասով Ընկերությունը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

30.03.2017թ. «armeps» էլեկտրոնային համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցներին առաջարկվել է ներկայացնել հրավերով նախատեսված որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը: Սահմանված ժամկետում «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն կողմից որևէ փաստաթուղթ չի ներկայացվել, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, մերժել է Ընկերության հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացրել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 23.06.2017թ. ժամը 11:30-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2017/20 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/20 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ՇՀԱՊՁԲ-7/29» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.03.2017թ. նիստի թիվ 6 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ 30.03.2017թ. «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից՝ թիվ 8, 10-15 և 18-րդ չափաբաժինների մասով:

3. Նույն արձանագրության 4.2 կետով որոշվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4. Պատվիրատուն 30.03.2017թ. ծանուցմամբ Ընկերությանը հայտնել է, որ վերջինս Ընթացակարգի թիվ 8, 10-15 և 18-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից և պարտավորվում է սույն ծանուցումը ստանալուց հետո հրավերով սահմանված կարգով և ժամկետում t.abrahamyan@mil.am էլեկտրոնային փոստին ուղարկել Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 10.04.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 7 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ արձանագրել է, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, մերժել է Ընկերության հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացրել հաջորդ տեղ զբաղեցրած «Գդակ» ՍՊԸ-ին:

6. «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն 23.06.2017թ. գրությամբ Խորհրդին հայտնել է, որ «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն հրավերով սահմանված ժամկետում էլեկտրոնային փոստով Պատվիրատուին է ուղարկել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընկերությունը վերը նշված գրությանը կից Խորհրդին է ներկայացրել Ընկերության՝ masisigarun@mail.ru, էլեկտրոնային փոստի հասցեից Պատվիրատուի՝ t.abrahamyan@mil.am, էլեկտրոնային փոստի հասցեին 04.04.2017թ. որակավորման փաստաթղթերը ուղարկելու փաստը հավաստող էլեկտրոնային փոստի արտատպումը:

5. **Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը**

Խորհուրդն, ուսումնասիրելով << ֆինանսների նախարարության 14.06.2017թ. թիվ 03/73-3/10728-17 գրությունը, << պաշտպանության նախարարության 08.06.2017թ. թիվ ԴՎԱ/1720 գրությունը՝ կից փաստաթղթերով, Ընկերության՝ masisigarun@mail.ru, էլեկտրոնային փոստի հասցեից Պատվիրատուի՝ t.abrahamyan@mil.am, էլեկտրոնային փոստի հասցեին 10.05.2017թ. որակավորման փաստաթղթերը ուղարկելու փաստը հավաստող էլեկտրոնային փոստի արտատպումը, հայտնում է հետևյալը.

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե ***հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է*** պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ ***հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման***

չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ***հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը,*** իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: ***Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկաացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ-1-ի 7.5 կետի համաձայն՝ ***գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ոչ ավտոմատ եղանակով ծանուցում է*** հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած ***Մասնակցին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող սույն հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը,*** ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը: Առաջին տեղը զբաղեցրած ***Մասնակիցը երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին է ուղարկում սույն ենթակետով նախատեսված փաստաթղթերը:***

Սույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած Մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ՇՀԱՊՁԲ-7/29» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով

գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.03.2017թ. նիստի թիվ 6 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ 30.03.2017թ. «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից՝ թիվ 8, 10-15 և 18-րդ չափաբաժինների մասով:

Նույն արձանագրության 4.2 կետով որոշվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Պատվիրատուն 30.03.2017թ. ծանուցմամբ Ընկերությանը հայտնել է, որ վերջինս Ընթացակարգի թիվ 8, 10-15 և 18-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից և պարտավորվում է սույն ծանուցումը ստանալուց հետո հրավերով սահմանված կարգով և ժամկետում t.abrahamyan@mil.am էլեկտրոնային փոստին ուղարկել Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 10.04.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 7 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ արձանագրել է, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, մերժել է Ընկերության հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացրել հաջորդ տեղ զբաղեցրած «Գդակ» ՍՊԸ-ին:

«Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն 23.06.2017թ. գրությամբ Խորհրդին հայտնել է, որ «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն հրավերով սահմանված ժամկետում էլեկտրոնային փոստով Պատվիրատուին է ուղարկել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընկերությունը վերը նշված գրությանը կից Խորհրդին է ներկայացրել Ընկերության՝ masisigarun@mail.ru, էլեկտրոնային փոստի հասցեից Պատվիրատուի՝ t.abrahamyan@mil.am,

էլեկտրոնային փոստի հասցեին 04.04.2017թ. որակավորման փաստաթղթերը ուղարկելու փաստը հավաստող էլեկտրոնային փոստի արտատպումը:

Այսպես, Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ ***հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները)***:

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ***հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը,*** իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: ***Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկաացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ-1-ի 7.5 կետի համաձայն՝ ***գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ոչ ավտոմատ եղանակով ծանուցում է*** հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած ***Մասնակցին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող սույն հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը,*** ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը: Առաջին տեղը զբաղեցրած ***Մասնակիցը երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին է ուղարկում սույն ենթակետով նախատեսված փաստաթղթերը:***

Սույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած Մասնակցին:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե ***հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է*** պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Խորհուրդն, ուսումնասիրելով «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերը նշված հիմքերը, գտնում է, որ Ընկերությունը «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/29» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված՝ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, քանի որ «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն Պատվիրատուի՝ ***t.abrahamyan@mil.am***, էլեկտրոնային փոստի հասցեից ***30.03.2017թ.*** ստացված ծանուցմանն ի պատասխան՝ Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ, ***04.04.2017թ.*** սահմանված ժամկետում և կարգով Պատվիրատուին է ներկայացրել հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը, որին ի հավաստումն Ընկերությունը 23.06.2017թ. գրությանը կից Խորհրդին է ներկայացրել ***Ընկերության՝ masisigarun@mail.ru, էլեկտրոնային փոստի հասցեից Պատվիրատուի՝ t.abrahamyan@mil.am, էլեկտրոնային փոստի հասցեին 04.04.2017թ. որակավորման փաստաթղթերը ուղարկելու փաստը հավաստող էլեկտրոնային փոստի արտատպումը,*** հետևաբար Ընկերությանն այս հիմքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 14.06.2017թ. թիվ 03/73-3/10728-17 գրությամբ «Մաեիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 03804898) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ